ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2022 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №714Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի նոյեմբերի 8-ի, 10-ի և 22-ի գրությունները, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնհինգ տարով երկարաձգել Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №714Ա որոշմամբ «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0277 լիցենզիայի գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «15 տարի» և 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2022 թվականի դեկտեմբերի 28-ը» բառերը փոխարինելով «մինչև 2037 թվականի դեկտեմբերի 28-ը» բառերով:

2. Հաշվի առնելով, որ 2022 թվականի նոյեմբերի 22-ին Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից 2016 թվականի դեկտեմբերի 5-ին տրված №000233 ջրօգտագործման թույլտվության համաձայն՝ ջրառի իրականացման վայրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնքի վարչական տարածքն է, իսկ Հանձնաժողովի 2007 թվականի փետրվարի 16-ի №51Ա որոշմամբ «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման №0237 լիցենզիայի անհատական գործում, այդ թվում՝ լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերում, առկա չեն Անտառաշեն համայնքում ընկերության լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթեր՝ պարտավորեցնել «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից չորս ամսվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը:
3. «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված 15 տարվա ժամկետն ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 28-ին.
2) պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, իսկ այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, ինչպես նաև արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել

հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2022թ.